



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

76

2

L-85

my. 26

2010

ԼՍԱՐԱՆ

ԿԵՆՑԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՅ

Ա.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ

ԴԱՍ ՎՅՅԵՐՈՐԻ



ԻԹԷՆՈՒՄԻԱ

Իսպարսկի Խաշիպեան Ուսումնարանի Հայոց

1861.

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

Ա Ս Տ ՈՒ Ա Ծ Ա Շ ՈՒ Ն Զ Ս ՈՒ Ր Բ Գ Ր Ո Ց

Դ Ա Ս Վ Ե Ց Ե Ր ՈՐ Գ .



սահակ նահապետը իրաւամբ օրինակ է այն արդա-
րոց որ իրենց յոյսն ու վստահութիւնը բոլորովին
Աստուծոյ վրայ դրած են, ինչպէս որ Աբրահամ հայր
եւ օրինակ է մեծահաւատ արդարոց:

Բաւական երկար ատեն անզաւակ էր Իսահակ, բայց յոյսը
մեծ էր Աստուծոյ խոստմանը վրայ, ու ամենեւին չէր տարա-
կուսեր որ Աբրահամու տրուած խոստմունքները պիտի կատա-
րուին: Ուրիշ կողմանէ՝ աղէկ գիտնալով թէ Աստուած կուգէ որ ի-
րեն մեզի տալու աղէկութիւնները՝ խնդրելով առնուաբ իրմէ, ա-
ղաչանքը անպակաս կրնէր Աստուծոյ որ կատարէ իւր խոստ-
մունքը. Աստուած ալ կատարեց, ու երկու զաւակ մէկէն տը-
ւաւ Իսահակայ՝ անոր վաճառն տարեկան եղած ժամանակը:

Այն երկուորեակ (էքիզ) եղբայրներէն մէկուն մարմինը մա-
զոտ ու կարմրագոյն էր, անոր համար անունը դրին Եսաւ,
որ կարմիր կնշանակէ. մէկաւին վրայ անուշ անմեղութեան հետ
արթնութիւն մը տեսնելով՝ անունը Յակոբ դրին, որ խաբող
կնշանակէ: Եսաւ կտրիճ ու տաքաքիւն բնութիւն մը ունենա-
լուն համար՝ որսորդութեան (ավճիութեան) տուաւ իրեն խել-
քը. պահը մէյմը կերթար որս մը (շիքեար մը) կզարնէր կը-
բերէր, ծերունի հօրը սիրած կերպովը կեփէր. ուստի Իսահա-
հակ ալ աւելի սէր մը կցուցընէր վրան: Յակոբ տունը կեցած՝
իրեն մօրը տնական աշխատանքներուն մէջ օգնութիւն կընէր

անոր. Ռեբեկան ալ հարկաւ Յակոբին վրայ աւելի սէր ունէր : — Թէ որ զաւակի տէր ծնողաց հարցընեմք, շատը կըսեն համարձակ Թէ ես իմ ամէն զաւակներս ալ հաւասար կսիրեմ. բայց աղէկ մտածեն նէ՛ իրենք ալ կխոստովանին որ մէկուն վրայ աւելի սէր ունին քան Թէ մէկալին : Այս սիրոյ բնական աստիճանները մեղադրելի չեն, մանաւանդ երբոր իրաւացի պատճառներ ունին. միայն Թէ միշտ զգուշալի է դրսէն մէկ զաւակին աւելի սէր ցուցընելը քան Թէ մէկալին : Սուրբ գիրքը այս խրատը մեզի տալու համար կպատմէ ահա եսաւայ ու Յակոբայ երիտասարդութեան ժամանակին մէկ երկու դիպուածները, ինչպէս նաեւ յետոյ Յովսէփ նահապետին պատմութիւնը :

Օր մը Յակոբ ոսպէ ապուր եփեր էր ու նստեր կուտէր. եսաւ վրայ հասաւ յոգնած դադրած. գուցէ այն օրը ուզածին պէս որս մ'ալ չէր ըրած. « Ինծի ալ տուր այդ ապուրէն որ ուտեմ, վասն զի խիստ քաղցած եմ » ըսաւ : Ատեն գտաւ Յակոբ իրեն խրոխտ եղբայրը չարչարելու՝ ինչպէս որ գուցէ ինքը շատ անգամ անկէց չարչարուած էր. « Ապուրին տեղը ինծի ի՞նչ կուտաս » ըսաւ : — Ի՞նչ կուզես : — Անդրանկուծեան իրաւունքդ ինծի տուր » ըսաւ Յակոբ : — Խիստ հին ատեններէն ի վեր անդրանկութիւնը, այսինքն առաջինեկ զաւակ լինելը մեծ բան էր գրեթէ ամէն ազգաց մէջ՝ իբրեւ Աստուծոյ օրհնութեանը առաջին նշան, եւ իբրեւ առաջին պարգեւ ծնողաց : ուստի այս իրաւունքն ալ ունէր որ հայրը ուրիշ զաւակներուն ի՞նչ բաժին որ կհանէր, անոր կրկինը (երկու խաթը) կառնէր առջինեկը : Յայտնի բան է որ Յակոբայ աչքը աւելի Իսահակայ օրհնութիւնը ժառանգելու իրաւունքին վրան էր՝ եւ ոչ Թէ հարստութեանը : վասն զի գիտէր որ այն օրհնենքին ուժովը ինքը պիտի ժառանգէր Աբրահամու տրուած օրհնենքները ու անոր եղած խոստմունքները, որոց գլխաւորը Մեսիային նախահայր լինելն էր :

Ի՞նչ եւ իցէ՛ Յակոբայ ըրածը տեսակ մը անգութութիւն կերեւնայ ոմանց խղճմտանքին ու չեն ուզեր արդարացընել այն հարուստներուն ըրածին կնմանի Յակոբայ ըրածն որ, կարծես Թէ

խեղճ աղքատներուն կարօտութիւնը իրենց համար վաստակի դուռ կընեն, եւ իրենք զիրենք արդարացընելու մտքով կըսեն համարձակ թէ բռնի չէ (զօռով չէ՛ եա), կամբը է, կուզես՝ տուր իմ ուզածս, առ քու ուզածդ: Եսաւին անօթութենէն աչքը մուծ կոխած՝ դարձաւ ըսաւ եղբօրը թէ «Ահաւասիկ ես երթամ ի վախճանել. եւ առ իմէ՞ իցեն ինձ այն անդրանկութիւնք. Կտեսնես որ իմ հոգիս բերանս հասեր է. անդրանկութեան իրաւունքներէն ինձի ի՞նչ շահ»:

Սուրբ Հարք եսաւայ այս խօսքին վրայ խորհրդածելով, անհամբերութիւն ու որկրամոլութիւն կտեսնեն մէջը, եւ օրինակ կբերեն եսաւը այն մարդկանց որ իրենց նիւթական ու անցաւոր վաստակըն ու ապրուստը՝ հոգեւոր ու անանց բարիքներէն վեր կընեն: Այս քննութիւնը հարկաւ պէտք չէ որ չափազանց խիստ ու անաչառ համարիմք սուրբ Հարց կողմանէ՛ եծէ մտածեմք թէ եսաւ ո՛րչափ ալ նեղեալ լինէր անօթութենէն՝ գիտէ՛ր թէ անդրանկութիւնը մէկ պնակ մը ոսպէ ապուրի հետ փոխելովը մեծ օրհնութիւն եւ բարիք կկորսընցընէր: Եւ ասոր համար է որ Պօղոս առաքեալն ալ կմեղադրէ եսաւն ու պիղծ կանուանէ՛ որ մէկ կերակուրի մը տեղ անդրանկութեան իրաւունքը ծախեց կըսէ:

Յակոբ երդում ուզեց եսաւէն՝ անդրանկութիւնը ծախելուն համար, նա ալ մէկէն իմէկ երդուընցաւ. առաւ ապուրը կերու խմեց ու ելաւ գնաց, ամենեւին հոգն ալ չեղաւ որ ըրածը աղէկ բան չէր:

Եսաւայ բնութիւնն ու բռնած ճամբան այնպիսի ճամբայ էր որ չէր կրնար իրեն ծնողացը սիրելի լինել ու անոնց օրհնութիւնը առնուլ: Քառասուն տարեկան եղած ատենը գնաց ինքիւր գլխուն երկու կին առաւ այլազգիներէն, որ իսահակայ ու Ռեբեկայի շատ բան քաշել սուրին իրենց անհանգիստ ու հակառակող բնութեամբը:

Երբոր իսահակ ծերացաւ ու 137 տարեկան եղաւ, աչքին զօրքը գնաց ու բան չէր տեսներ: Կանչեց օր մը իրեն եսաւ որդին ու ըսաւ. «Որդեակ, կտեսնես որ ծերութիւնս կոխեց, այսուհետեւ ո՛ր օր մեռնիլս չեմ գիտեր. արի աղեղը ու նետերդ առ, գնա ինձի որս մը բռնէ բեր, իմ սիրած կերակու-

ըէս եփէ, ուտեմ ու ետքի օրհնենքս տամ քեզի»: Եսաւ ամե-
նայն սիրով ելաւ գնաց որսի:

Ռեբեկան Իսահակայ ի՛նչ ապսպրածը լսեր էր. արժանի
չէր տեսներ Եսաւը այն օրհնութեան, բայց Իսահակայ սիրտն
ալ չէր ուզեր կոտրել՝ իմացընելով անոր թէ ըրածդ աղէկ բան
չէ, ետքի օրհնենքդ Յակոբին պէտք է տաս: Հնարք մը բանե-
ցուց Յակոբայ սիրոյն համար. գնաց պատմեց անոր թէ «Հայ-
րըդ այսպէս այսպէս բան ապսպրեց Եսաւայ. հիմա դուն իմ
խօսքս մտիկ ըրէ, գնա ինծի մեր անդէն երկու հատ փա-
փուկ ընտիր ուլեր (այծի ձագեր) բեր. ես անոնցմէ հօրդ սի-
րած կերակուրը կեփեմ, կառնուս կտանիս հօրդ որ ուտէ ու
օրհնենքը քեզի տայ»: Յակոբ դարձաւ ըսաւ մօրը թէ «եղ-
բայրս մազոտ մարդ է, ես լերկ. թէ որ յանկարծ հայրս ձեռ-
քով ինծի դաչի նէ՛ խաղք պիտի լինիմ. վախեմ թէ այն ատե-
նը օրհնութեան տեղ անէծք կբերեմ գլխուս: — Այն անէծքը
իմ գլխուս թող լինի, որդեակ, ըսաւ Ռեբեկան. դուն իմ ը-
սածս ըրէ, ուրիշ բան մի՛ մտածեր»:

Գնաց Յակոբ, մօրը հրամանը կատարեց. մայրն ալ Իսահա-
կայ սիրած կերակուրը պատրաստելէն ետեւ՝ Եսաւայ պահճու
հագուստը առաւ Յակոբին հագցուց, այծերուն մորթովն ալ
անոր թելերն ու վիզը ծածկեց, կերակուրը ձեռքը տուաւ ու
ղրկեց Իսահակայ: Յակոբ ներս մտաւ, «Հայր իմ» ըսաւ:
«Հրամէ, պատասխանեց ծերունին. ո՞վ ես դուն որդի: — Ես
քու անդրանիկ որդիդ, Եսաւն եմ. ահա հրամանդ կատարեցի.
Ել նիստ ու կեր իմ բռնած որսէս ու օրհնութիւնդ տուր ինծի:
— Այդ ի՛նչ շուտ ըրիր, որդեակ» ըսաւ Իսահակ: Յակոբ պա-
տասխանեց թէ «Աստուած այս անգամ բանս աղէկ յաջողեց:
— Մօտ եկուր նայիմ, յիրաւի դուն իմ Եսաւ որդի՞ս ես թէ չէ,
ըսաւ Իսահակ. շօշափեց ձեռքերովը, «Ձայնդ Յակոբայ ձայնն
է ըսաւ, ձեռքդ Եսաւայ ձեռքն է. բայց ի՛նչ եւ իցէ, դուն իմ
Եսաւ որդիս ես, այնպէս չէ՞» ըսաւ Իսահակ: «Այո, ես եմ»
ըսաւ Յակոբ: «Ուրեմն բեր կերակուրդ ուտեմ ու օրհնեմ ըզ-
քեզ» ըսաւ. կերաւ կերակուրը, վրայէն ալ գաւաթ մը գի-
նի խմեց, յետոյ քովը կանչեց որդին՝ համբուրեց ու ըսաւ.

«Որդւոյս հագուստին հոսը Աստուծոյ օրհնած բարեբեր արտի մը հոտին կնմանի. Աստուած իրեն օրհնութիւնը այնպէս տայ քեզի՝ ինչպէս որ երկնքէն ցօղ կուտայ ու երկրէս բարեբերութիւն. ցորենդ ու գինիդ անպակաս լինին. ազգեր ու ժողովուրդներ քեզի ծառայ դառնան, եւ իշխաններն ու մեծամեծները քեզի երկրպագութիւն ընեն. եղբօրդ վրայ դուն տէր լինիս, ու քեզմէ պատիկները երկրպագութիւն ընեն քեզի. քու անիծածդ անիծեալ լինի, քու օրհնածդ օրհնեալ»:

Յակոբ Իսահակայ քովէն դուրս ելած չելած՝ եսաւը տուն եկաւ, կերակուրը պատրաստեց, առաւ տարաւ հօրն ու ըսաւ թէ «Հայրիկ, ել անուշ ըրէ որդւոյդ քեզի համար ըրած որքն ու օրհնութիւնդ տուր ինձի»: — Ո՛վ ես դուն, ըսաւ Իսահակ զարմանալով: — Ես քու անդրանիկ որդիդ եսաւն եմ: — Հապա այն ո՛վ էր որ գնաց ինձի որս բռնեց, բերաւ տուաւ ու կերայ քու գալէդ առաջ ու օրհնեցի զինքը, եւ օրհնեալ լինի»: Այն որ լսեց եսաւ, սաստիկ դառնացաւ, աղաղակեց կանչեց բարձր ձայնով ու ըսաւ հօրը. «Ուրեմն զիս ալ օրհնէ, հայր»: Իսահակ պատասխանեց թէ «Հիմա ի՞նչ ընեմ. եղբայրդ եկաւ զիս խաբեց ու քեզի տալու օրհնենքներս ինքն առաւ»: — Յիրաւի անոր անունը Յակոբ դրեր են, կանչեց եսաւ. այս երկու անգամ է որ կխաբէ զիս. առաջ անդրանկութիւնս առաւ, հիմա ալ օրհնութիւնս: Այժմ ինձի մէկ օրհնենք մ'ալ չընդունցի՞ր, հայր»: Պատասխան տուաւ Իսահակ թէ «Որովհետեւ զնա քեզի տէր դրի, ու քու փոքր եղբայրներդ անոր ծառայ լինին ըսի, ցորենն ու գինին անպակաս լինին ըսի, քեզ ի՞նչ ընեմ, որդեակ: — Մի՛թէ մէկ օրհնենք մը միա՞յն ունիս, հայր. զիս ալ օրհնէ, հայր» ըսաց եսաւ, ու տեսնելով որ հայրն ալ կափոտայ եղածին վրայ, ձայնը ձգեց ու սկսաւ լսալ: Այն ատեն հայրը եսաւայ ալ այս օրհնենքները տուաւ. «Քու բնակած երկիրդ լի լինի պարարտութեամբ, ու երկնքի ցօղովը աւելի պարարտանայ. քու թրովդ ապրիս, ու եղբօրդ ծառայ լինիս՝ մինչեւ ժամանակ մը գայ որ անոր լուծը վզդ քակես ու հանես»:

Այս պատմութեան մէջ զարմանալի բան է նահապետաց այն-

քան մեծ համարում ունենալը ընդհանրապէս օրհնութեան վրայ, եւ մանաւանդ ծնողաց օրհնենքին վրայ: Օրհնենքը իրենց համար մարգարէութեան պէս բան մըն էր. ամենեւին չէին տարակուսեր որ սրտանց տրուած օրհնութիւնը՝ սրտանց ընդունողին անպատճառ կհասնի, ինչպէս որ անէծքն ալ. մանաւանդ արդար մարդուն տուած իրաւացի անէծքը՝ պէտք է որ շուտ կամ ուշ՝ հասնի անպատճառ անէծքի արժանի եղող յանցաւորին:

Օրհնենք տալ սովորութիւնը ամէն ազգաց մէջ ամէն ժամանակ եղած է ու կայ. միայն թէ այժմ աւելի մնացեր է արեւելեան ազգաց՝ քան թէ եւրոպացւոց մէջ. մեղք որ արեւելոցց մէջ ալ պակսելու վրայ է: Արդեօք օրհնենք տալու արժանաւորութիւն ունեցող արդարներուն քիչնա՞ն է այս բանիս պատճառ, թէ օրհնենք ընդունելու արժանի անձինքը քանի կերթան կքիչնան:

Աւելի հետաքրքրական, մանաւանդ թէ զայժազդական երեւցածը ոմանց այս գործոյն մէջ, Յակոբայ խաբէութիւնն է, որ մօրը խրատովը կերթայ իւր հայրը կխաբէ ու եղբօրը առնելու օրհնութիւնը ի՞նքը կյափշտակէ: — Ասոր վրայ առաջ այս ըսեմք որ Յակոբայ գործը ըստ ինքեան սուտ ու խաբէական էր, ուստի եւ չկրնար արդարանալ աստուածային եւ մարդկային օրինօք. բայց այնչափ մեծ չէ այս յանցանքը՝ որչափ որ կուզեն մեծցընել անոնք որ արդարոց վրայ պակասութիւն գտնելը իրենց արդարացուցմունք ու զուարճութիւն կհամարին. վասն զի ամենեւին պէտք չէ կարծել թէ անով անիրաւութիւն մը, զրկանք մը, յափշտակութիւն մը ըրած գտնուեցաւ Յակոբ Նսաւայ: Նսաւ արդէն իրեն անդրանկութեան իրաւունքը մէկ պնակ մը ապուրի հետ փոխելովը յայտնի ցուցուց որ այնպիսի հոգեւոր աղէկութեանց օգուտը՝ յարգը (խըյմէթը) չճանչնար. ետքն ալ իրեն վայրագ (եապանի), բարկասիրտ ու հօրը մօրը խօսքերը բանի տեղ չընող բնաւորութեամբը աղէկ երեւցուց որ հօրը ետքի մեծամեծ օրհնենքները ժառանգելու արժանաւորութիւն չունի. ուստի եւ այն գոռում գոչումն ու աղաղակը որ վերցուց՝ աւելի սրտին բարկութենէն ու չարութենէն էր՝ քան թէ հօրը օրհնենքէն զրկուածին համար:

Ռեբեկային ու Յակոբայ ըրած խաբէութիւնը իհարկէ հետեւելու բան չէ, գովելի գործ մը չէ, որովհետեւ սուտ խօսիլը միշտ յանցանք՝ միշտ պակասութիւն է. բայց մեք երբոր կտեսնեմք թէ Աստուածաշունչը յայտնի խօսքերով վար չզարներ զայն, պէտք է ըսեմք որ մեք այն պատմութեան բոլոր պարագաները, կամ գէթ գործոյն խորհուրդները չեմք գիտեր: Մեր հասկընալու բանը չէ, օրինակի համար, թէ ինչո՛ւ կամեցաւ Աստուած որ Յակոբայ տրուի Աբրահամու եւ Իսահակայ օրհնենքը, եւ ոչ Եսաւայ, մինչդեռ Պողոս առաքելոյն զարմանալով մը ըսածին պէս՝ բարի կամ չար գործ մը ըրած չէին՝ ոչ մէկը եւ ոչ մէկալը, մանաւանդ քանի որ դեռ աշխարհք ալ եկած չէին: Այսու ամենայնիւ Եսաւայ ու Յակոբայ վարքին նայելով՝ մեր խելքն ալ կվկայէ թէ Յակոբ անելի արժանի էր Իսահակայ օրհնութեանն ու սիրոյն՝ քան թէ Եսաւ:

Եսաւայ գէշութեան մէկ ապացոյցն ալ այս է որ երկար ատեն ոխ պահեց Յակոբայ՝ այն օրհնենքները առնելուն համար, եւ միտքը դրեր էր որ հօրը մեռնելէն ետեւ զարնէ մեռցընէ իւր եղբայրը: Նախանձէ առաջ եկած ոխը խիստ ուշ կելլէ մարդուս սրտէն: Ռեբեկան այս բանին առաջուց խելք հասուցած չլինելով, Յակոբը այնպիսի վտանգի մը մէջ ձգեց որ ինքն ալ չէր գիտեր թէ ի՛նչ կերպով ազատէ զնա փորձանքէն: Վերջապէս քովը կանչեց Յակոբն ու ըսաւ թէ «Լսեցի որ Եսաւ եղբորդ միտքը զքեզ մեռցընել է. խօսքիս մտիկ ըրէ, եւ զնա Միջագետաց Խառան քաղաքը՝ Լաբան եղբօրս քով ու հոն կեցիր մինչեւ որ Եսաւայ սիրտը պաղի, բարկութիւնը անցնի. անկէց ետքը ես քեզ նորէն հոս կկանչեմ»:

Յետոյ ուրիշ հնարք մ՛ալ բանեցուց Ռեբեկա: Զըսաւ Իսահակայ թէ Յակոբը Խառան խրկելուն բուն պատճառը ի՛նչ է, որպէս զի Տերունւոյն սիրտը տակնուվրայ չլինի չզայրանայ. հապա այս պատճառը միայն ըսաւ անոր թէ «Եսաւայ առած այլազգի հարսերուն ձեռքէն քաշածս դիմանալու բան չէ. թէ որ Յակոբն ալ այս այլազգիներէն պիտի առնու իրեն հարսնացուն, լաւ է որ ես առաջ մեռնիմ երթամ, այն օրը չտեսնեմ»: Իսահակ այս որ լսեց՝ կանչեց Յակոբը, օրհնենքներ տուաւ ա-

նոր ու ապսպրեց որ Գանանացւոց աղջիկներէն չառնու իրեն հարսը, այլ երթայ Միշագետք՝ Խառան քաղաքը, եւ հոն իւր Լաբան մօրեղբօրը փեսայանայ :

Յակոբ հօրը տնէն բաժնուեցաւ, ճամբայ ելաւ դէպ ի Խառան երթալու, չէր գիտեր թէ մէյմալ ե՛րբ պիտի դառնայ իւր ծննդեան երկիրը եւ ի՛նչ կերպով. բոլոր յոյսը դրեր էր Աստուծոյ խոստմունքներուն վրայ որ ըրած էր Աբրահամու եւ Իսահակայ, եւ իւր հօրմէն ընդունած օրհնենքներուն վրայ: Անոնք էին իրեն մի միայն հարստութիւնն ու մեծութիւնը, բայց չըկորսուելու եւ ճշմարիտ հարստութիւն, որ շատ անգամ աղբիւր կլինի նաեւ ուրիշ նիւթական հարստութեան եւ աշխարհօրէն երջանկութեան:

Ճամբան իրիկուան դէմ տեղ մը որ հասաւ, քար մը առաւ գլխուն տակը դրաւ ու քուն եղաւ: Այն գիշերը տեսիլք մը տեսաւ. գետնէն մինչեւ երկինք սանդուղք (մէրտիվէն) մը դրուած էր, վրան հրեշտակները կելլէին ու կիշնային, սանդուղքին վերի ծայրն ալ Աստուած կեցեր՝ կըսէր իրեն թէ «ես եմ քու Աբրահամ հօրդ ու Իսահակայ Աստուածը. մի՛ վախար. այդ քու պառկած տեղդ քեզի ու քու զաւակիդ պիտի տամ: Քու զաւակներդ ծովու աւազին պէս անթիւ պիտի լինին, ու դէպի ամէն կողմը տարածուին. քու զաւակովդ պիտի օրհնուին նաեւ աշխարհիս երեսի ամէն ազգերը: Ո՛ւր ալ երթաս՝ ես քեզի հետ եմ, ու ես զքեզ նորէն այս երկիրը պիտի դարձնեմ ու ոչ երբէք ձեռքէ պիտի ձգեմ»:

Յակոբ իսկոյն արթնցաւ քունէն ու ըսաւ ինքիրեն մեծ պատկառանօք թէ «Այս Աստուծոյ տեղն է եղեր ու ես չէի գիտեր. Աստուծոյ տունն է ուրեմն այս, եւ երկնքի դուռը հոս է եղեր»: Աղէկ գիտէր Յակոբ ալ թէ Աստուած ամէն տեղ է, եւ ամէն տեղ Աստուծոյ տունն ու տաճարն է, մանաւանդ արդար մարդուն սիրտը. բայց այս ալ գիտէր — զոր թեթեւութեամբ մտածող մարդիկ չգիտնալու կզարնեն— թէ Աստուած է դարձեալ մարդկանց սիրտը շարժողն ու մտքի լոյս տուողն որ զինքը միաբանութեամբ պաշտելու համար որքան կարելի է պատշաճ տեղեր որոշեն, ու այն տեղ իրենց աղօթքն ու օրհի-

նութիւնները հրեշտակաց ձեռքովը առ Աստուած վերացընեն, Աստուծոյ ողորմութիւնն ու շնորհքներն ալ այն տեղ իրենց վրայ իջեցընեն. եւ ահա այսպիսի տեղերն են որ յետոյ ըսուեցան տուն կամ տաճար Աստուծոյ, աղօթարան, եկեղեցի (ժամ) եւ այլն:

Առաւօտը ելլելուն պէս՝ գլխուն տակը դրած քարը առաւ տնկեց, ու քարին գլուխը եղ թափելով օծեց, տեղւոյն անունն ալ Բեթէլ դրաւ, որ տուն Աստուծոյ ըսել է: Ուխտ ալ ըրաւ ու ըսաւ մտքէն որ «Եթէ Աստուած միշտ հետս լինի, ու այս ֆամբուս մէջ առանց փորձանքի պահէ, ետքն ալ ինձի պէտք եղած հացն ու հագուստը պարգեւէ, ու ողջ առողջ զիս հօրս տունը դարձընէ, ես ալ աստուածալաշտութիւնս ամենեւին ձեռքէ չձգեմ, այլ այս տնկած քարիս տեղը Աստուծոյ տուն լինի ինձի համար, եւ ի՞նչ որ Աստուած տայ ինձի՝ ամենուն ալ տասանորդը, այսինքն տասներորդ բաժինը Աստուծոյ տամ»:

Յակոբ նահապետին այս պատմութեանը մէջ երեք բան կայ դիտելու եւ խելք սովրելու: Մէկը այս թէ տեսիլքը ի՞նչ բան է. երկրորդը թէ քարը եղով օծելը ի՞նչ կնշանակէր. եւ երրորդը թէ ուխտը ի՞նչ է:

Սուրբ գրոց մէջ տեսիլք ըսուածը այն յայտնութիւնն է որ Աստուծոյ կողմանէ կլինի մարդու՝ թէ արժուն եղած ատենը միտքը վերանալով, եւ թէ քնոյն մէջ երագով, բայց այնպէս որ մէջը երեւակայութեան խաբէութիւն կամ ուրիշ ո՛ր եւ իցէ բնական պատճառ չգտնուի: Այսպիսի տեսիլներ շատ կը պատմուին հին եւ նոր կտակարանին մէջ, եւ չեմք կրնար տարակուսիլ անոնց յիրաւի տեսիլք՝ այսինքն աստուածային յայտնութիւն լինելուն վրայ: Բայց ի՞նչ ըսեմք անոնց որ ի՞նչ եւ իցէ երազ ալ որ տեսնեն՝ կարծեն թէ տեսիլք է. ուստի իրենք կհաւատան, ուրիշներուն ալ հաւատացընելու կաշխատին. կամ թէ անոր ներհակ՝ ի՞նչ պիտի ըսեմք նաեւ անոնց որ ամէն երազ, ամէն տեսիլք ալ փուճ բան է, խաբէական երեւակայութիւն է ըսելով, իբր թէ չափազանց հաստատամտութիւն կամ չափազանց բարեպաշտութիւն կծախեն, եւ անով մինչեւ Աստուածաշնչին մէջ պատմուած տեսիլքներուն ալ չեն

ուզեր հաւատալ: — Այս անգամ կարճ խօսքով այսչափը միայն ըսեմք, պատուական ժողովականք, որ սուրբագրոց մէջ պատմուած երազներն ու մարգարէական տեսիլքները մէկ մէկ ստոյգ աստուածային յայտնութիւններ են. եւ այս անկէց ալ կիմացուի որ ի՛նչ որ այն երազներով կգուշակուէր՝ ամէնն ալ կատարուած են: Եւ որովհետեւ հին ատենները ստոյգ տեսիլքներ կամ հաւատալու արժանի երազներ եղեր են, կրնամք անշուշտ ըսել թէ ուրեմն հիմա ալ ինչո՞ւ պիտի չլինին: Միայն թէ փափաքելի է որ հիմակուան մարդկանց բարեմտութիւնն ալ ընդհանրապէս հին ատենի արդարոց բարեմտութեանը հասնի, եւ կամ հիմակուան մարդկանց երազներն ալ այնպիսի պարագաներ՝ յայտնի նշաններ ունենան իրենց հետ որ մարդ չկարենայ տարակուսիլ անոնց գերբնական յայտնութիւն կամ գէթ նախազգացումն ըսուած գաղտնի երեւոյթներէն մէկը լինելուն վրայ:

Այսու ամենայնիւ այս ստոյգ է որ հասարակ մարդկանց սովորաբար տեսած երազներուն հարիւրին մէկը հազիւ կգտնուի որ խելքի յարմար հետեւանք մը ունենայ, կամ թէ ետքը իրօք ելլէ, կամ ետքէն պատահած դիպուածին հետ յարմարութիւն մը ունենայ: Եւ ահա այսպիսի երազներու համար, ուստի եւ ընդհանրապէս ամենայն երազոց համար է որ կապալարեն մեզի թէ՛ սուրբ գիրքը եւ թէ ամենայն Հարք եւ վարդապետք եկեղեցւոյ որ երազի չհաւատամք՝ հեծանոսաց կամ կռապաշտներու պէս: Հեծանոս ու կռապաշտ ազգերը ամէն երազի կհաւատային կոյր զկուրայն. եւ որովհետեւ ամէն տեսածներուն մէկ մէկ մեկնութիւն գտնելը ամէն մարդու բանը չէ, մէջերնէն կարդացողները, քահանաները, մոգերը երազ մեկնելու արհեստը (զէնահամը) գիտէին ու ստըկով այն մեկնութիւնները կուտային: Հայաստան ալ ատենով մասնաւոր կռատուն մը կար, ու ո՛վ որ տեսած երազին մեկնութիւնն ուզէր՝ հոն կերթար կհարցընէր Տիր կամ Հերմէս կուռքին քուրմերուն. բայց սուրբ հայրն մեր Գրիգոր Լուսաւորիչ ուրիշ կռատուններուն հետ այն ալ կործանեց, ինչպէս որ կպատմէ Ագաթանգեղոս: Ապա ուրեմն բարեպաշտ հայ քրիստոնէին չվայելեր, մանաւանդ թէ

մեղք ալ է, ո՛ր եւ իցէ երազի հաւատալ Թեթեւութեամբ՝ երազահանին մէջ այսպէս գրուած է, կամ Թէ մեր հիներէն, դրացիներէն, բարեկամներէն այսպէս լսած եմք ըսելով:

Բայց երազի վրայ Թերեւս ուրիշ ատեն ալ առիթ կունենամք խօսելու. հիմա տեսնեմք Թէ քարին օճումն ի՛նչ էր:

Արեւելք ու ամէն տաք երկիրներ մարդիկ հարկաւոր տեսած են անուշահոտ եղով օճել իրենց մարմինը, մանաւանդ իրենց գլուխը. ուստի տեղ տեղ պատուոյ համար իրենցմէ մեծին կամ իրենց հիւրին (միւսաֆիրին) գլուխն ալ եղով կօծէին, ու մինչեւ հիմա կայ շատ տեղ այս սովորութիւնը: Հրէից մէջ ալ այս կերպով մնացած ու ետքը մովսիսական օրէնքով հաստատուած է եղով օճելը ոչ միայն Աստուծոյ նուիրեալ կամ մասնաւոր պատուով մը ուրիշներէն վեր ճանչցուած մարդիկը, ինչպէս քահանաները, քահանայապետներն ու Թագաւորները, հապանաւ նիւթական բաները. ինչպէս ահա եւ Յակոբ նահապետ օճեց զխոն տակի քարը՝ իբրեւ Աստուծոյ նուիրեալ յիշատակ եւ անոր տաճարին հիմ (Թէմէլ) ու նշան: Քրիստոնէական եկեղեցին ալ իւր խորհուրդներուն ու արարողութեանցը մէջ վայելչապէս պահեր է օճումը, առաքելոց հրամանները կատարելով ու անոնց օրինակին հետեւելով:

Ուխտը այն խոստումն է առ Աստուած, որով մարդս միտքը կընէ այնպիսի աստուածահաճոյ գործ մը ընել՝ որ ըստ ինքեան պարտական չէր ընելու: Ըսել է Թէ ուխտը պիտի լինի նախ աստուածահաճոյ՝ բարի գործի մը համար, եւ երկրորդ՝ այնպիսի բանի համար որ Աստուած արդէն պարտք դրած կամ պատուիրած չէ, եւ կամ արգելած չէ ընելը: Ադէ՞կ բան է արդեօք ուխտ ընելը: — Ասոր ամենեւին տարակոյս չկայ. վասն զի կտեսնեմք ահա խիստ շատ օրինակներով որ Աստուած նահապետաց եւ ամենայն արդարոց ըրած ուխտերն ընդունել է: Յակոբ ուխտ կընէ որ իւր ամէն ունեցածին տասանորդը Աստուծոյ տայ, եւ ընդունելի կլինի ուխտը Աստուծոյ. Դաւիթ ուխտ կընէ որ տաճար շինէ Աստուծոյ, եւ ընդունելի կլինի. Հրէից իշխանները ուխտ կընեն որ տաճարին շինութեանը մասնակից լինին, ու իրենց ուխտը կկատարեն: Անկէց իզատ Մով-

սէս զանազան օրէնքներ դրած է արանց եւ կանանց որ կուզեն այլ եւ այլ ուխտերով իրենք զիրենք կամ իրենց զաւակները՝ ստացուածքները Աստուծոյ նուիրել:

Մարդկանցմէ ոմանք տգիտութեամբ, ոմանք ալ թեմեւեւախաւտութեամբ կըսեն թէ ուխտը անվայել ու անպատշաճ բան է, իբր թէ Աստուծոյ հետ առուտորի կամ դաշնադրութեան նստելու պէս բան մըն է. օրինակի համար, ահա Յակոբ ուխտըրած ատենը կըսէ որ «եթէ Աստուած զիս ողջ առողջ պահէ պաշտպանէ ու բաներս յաջողէ, տասանորդ տամ իրեն»: Մի՞թէ այս բանը առուտոր կամ փառասիրութիւն չէ՞ կըսեն:—Ոչ երբէք, հապա երախտագիտութիւն է, աղէկութիւն ճանչնալ է: Յակոբ այն խօսքովը ոչ եթէ Աստուծոյ վրայ պարտք մը կընէ, հապա ինքը իրեն վիզը պարտք մը կառնու, այնպիսի նոր պարտք մը որ ըստ ինքեան պարտական չէր կատարելու, վասն զի ոչ պատուիրան էր այն եւ ոչ հրաման: Թէ որ Աստուծմէ հարստութիւնը չընդունէր, յայտնի բան է որ տասանորդ տալու կարողութիւն ալ չէր ունենար: Այսպէս նաեւ Սամուէլի մայրը Աննա ուխտ ըրաւ որ զաւակ մը ունենայ նէ՛ Աստուծոյ նուիրէ. թէ որ այն զաւակը չծնանէր, իհարկէ մայրը իւր ուխտը կատարելու կարողութիւն ալ չէր ունենար: Ապա ուրեմն ուխտը մարդուս կողմանէ դաշնադրութիւն մը չէ Աստուծոյ հետ, հապա Աստուծմէ ընդունած կամ ընդունելու աղէկութիւններուն համար երախտագիտութեան նշան է միայն, ուստի եւ տարակոյս չկայ որ աստուածահասոյ բան է:

Միայն թէ աղէկ պիտի նայի մարդս որ ընելու ուխտը անպատշաճ կամ վնասակար կամ իւր կարողութենէն վեր բան չլինի: Եթէ գիտութեամբ անպատշաճ կամ վնասակար ուխտ մը ըրած գտնուեցաւ, իհարկէ պարտական չէ այնպիսի ուխտը կատարելու. իսկ թէ որ կարողութենէն վեր է մէկուն ըրած ուխտը, պէտք է իրեն անխոհեմութեանն ու յանդգնութեանը պատիժը քաշէ՛ խղճմտանքին անհանգստութենէն, թէ որ Աստուած չողորմի իրենն ու լոյս չտայ մտքին՝ իւր չափն ու ըրած սխալանքը ճանչնալու:

76

0023390

2013

